ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 Երևան Վ. Սարգսյան, հեռ. 594015
Էլ. փոստ sirvard.gevorgyan@justice.am

N 06/27.1/9578-2022
«03» մարտի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ.ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Բալասյան,

Ի պատասխան Ձեր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի Ե-146/22 գրության՝ կից ներկայացվում է «Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» և «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

3/7/2022

X

Sirvard Gevorgyan

Signed by: GEVORGYAN SIRVARD 6804830105

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N Դ-994/22
«11» 03 2022 թ.

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՍԻՐՎԱՐԴ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Տաթևիկ Ղազարյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 14

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի թիվ 17-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ նախաբանում հղում է տրված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ինչը չի հանդիսանում ներկայացված նախագծի ընդունման իրավական հիմք: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները վերաբերում են տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններին, մասնավորապես՝ վերջիններս լինում են սեփական, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով: Հիշյալ կարգավորումից պարզ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասը հանդիսանում է լիազորող նորմ համայնքի ավագանու կողմից կամավոր խնդիրները սահմանելու համար, մինչդեռ ներկայացված նախագիծը վերաբերում է կամավոր խնդիրները լուծելու ***չափորոշիչների սահմանմանը***, ինչի համար Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի 1-ին մասը հանդիսանալ չի կարող:

2. Նախագծի 1-ին կետով սահմանվող «Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչների /այսուհետ՝ Չափորոշիչ/ 1-ին կետի համաձայն՝ ***բացի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչներից*** նախատեսվում են նաև մի շարք այլ հարաբերությունների կարգավորում, մասնավորապես՝ սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու կարգավորումներ, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմաններ և գործունեության ընթացակարգ, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման թերթիկի ձև և սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձև: Վերոնշյալ կարգավորումների առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ վերջիններս դուրս են Բյուրեղավան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչների կարգավորման առարկայի շրջանակից: Այս առնչությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց՝ Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

Բացի այդ, հարկ է նկատի ունենալ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ ***Համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են ավագանու որոշմամբ:*** Ելնելով հիշյալ կարգավորման բովանդակային վերլուծությունից, ներկայացված նախագծով պետք է նախատեսվեր ոչ միայն սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչի սահմանում, այլ նաև համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորությունների և տվյալ լիազորությունների իրականացման կարգի սահմանում, որի շրջանակներում էլ հնարավոր կլիներ

իրականացնել Չափորոշչի 1-ին կետով նախատեսվող բոլոր գործողությունները: Այս կապակցությամբ Նախագծի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

3. Չափորոշչի 2-րդ կետով նախատեսվում է, որ համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող ***մշտական հանձնաժողով:*** Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համայնքի ղեկավարի լիազորությունները սոցիալական պաշտպանության բնագավառում ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածում, որով համայնքի ղեկավարի համար նման լիազորություն սահմանված չէ: Այդ առումով Համայնքի ղեկավարը սոցիալական պաշտպանության բնագավառում որևէ գործողություն իրականացնելիս պետք է առաջնորդվի սեփական լիազորությունների այն շրջանակով, որը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով: Վերոնշյալ իրավական կարգավորումներից բխում է, որ համայնքի ղեկավարի համար՝ ***մշտական գործող հանձնաժողով*** ստեղծելու և վերջինիս գործունեության ընթացակարգը սահմանելու լիազորություն վերապահված չէ: Այդ առումով հարկ է նկատի ունենալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքում ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար ստեղծում է ***մշտական,*** իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

Ավագանու հանձնաժողովների քանակը, ***գործառույթները և ձևավորման կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով:***

Ելնելով վերոգրյալ իրավական կարգավորումներից՝ Չափորոշչի 2-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջներին:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև Չափորոշչի տեքստում առկա հանձնաժողովին առնչվող կարգավորումներին:

4. Չափորոշչի մի շարք կետերում կիրառվում են «դիմում» և «գրություն» տերմինները: Հետևապես, հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ ապահովելով միատեսակ տերմինների կիրառում՝նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները:

5. Չափորոշչի 18-րդ կետում անհրաժեշտ է հստակ նշել, թե որոնք են այն անհրաժեշտ դեպքերը, որոնցով պայմանավորված համայնքապետարանի աշխատակազմի աշխատակցի կողմից վերցվում են սոցիալական աջակցության համար դիմած անձի ***փաստաթղթերի բնօրինակները***:

6. Չափորոշչի 24-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնքի ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու մասին որոշում կամ ***գրավոր մերժվում է*** սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարզ չեն սոցիալական աջակցության տրամադրման ***մերժման հիմքերը***, ինչի առնչությամբ հարկ է նկատի ունենալ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ հիմնական իրավունքները սահմանափակելիս պետք է սահմանվեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով

որոշակի, որպեսզի այդ իրավունքների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

7. Չափորոշչի 26-րդ կետով՝ սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ***30 աշխատանքային օրվա ընթացքում:*** Հիշյալ կարգավորումը չի բխում ***«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածի պահանջից, համաձայն որի՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է:*** Հետևապես՝ 26-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ նախատեսելով օրենքից բխող ժամկետ:

8. Չափորոշչի 31-րդ կետում «գնահատման» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «կարիքների» բառը՝ նկատի ունենալով, որ պետք է կատարվի ոչ թե ընտանիքի, այլ ընտանիքի կարիքների գնահատում:

9. Չափորոշչի 36-րդ կետում պարզ չէ, թե ինչ է իրենից ներկայացնում սոցիալական աշխատողի **«հատուկ եզրակացությունը»** /ինչ չափանիշներից ելնելով է կազմվելու/, քանի որ վերջինիս հիման վրա որոշում է կայացվելու աջակցության տրամադրման կամ մերժման մասին:

10. Ըստ Չափորոշչի 37-րդ կետի՝ ընտանիքի կարիքների գնահատումը կատարվելու է համաձայն տվյալ կետով սահմանված չափորոշիչների,մինչդեռ նույն կետի 14-րդ ենթակետը որպես չափորոշիչ նախատեսում է նաև **«անբարենպաստ այլ պայմանները»:** Իրավական որոշակիության սկզբունքից ելնելով հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ հստակ նշելով, թե խոսքն ինչ այլ պայմանների մասին է:

11. Չափորոշչի Զև 1-ում և Զև 2-ում «Հասցե» բառն անհրաժեշտ է փոխարինել «Բնակության վայրը» բառերով՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահաջների:

«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի թիվ 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի թիվ 18-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ նախաբանում հղում է տրված նաև «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածին, որը վերաբերում է հանրային սննդի ծառայության հիմնական հասկացությունների սահմանմանը և չի հանդիսանումներկայացված Նախագծի իրավական հիմքը սահմանող լիազորող նորմ: Հետևապես՝ նախագծի նախաբանն անհրաժեշտ է խմբագրել՝ հանելով «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածին կատարված հղումը:

2. Հավելվածի 2-րդ և 3-րդ կետերի ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին, համաձայն որոնց՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում ***ենթակետերը համարակալվում են արաբական թվանշաններով,*** որոնք տեքստից բաժանվում են փակագծով: Նույն դիտողությունը վերաբերում է նաև Հավելվածի 21-րդ կետի դրույթներին:

3. Հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառք՝ համայնքի ղեկավարի կողմից անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց տրված թույլտվության

դեպքում: Այս առումով հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***հանրային սննդի օբյեկտներում թույլատրվում է ալկոհոլային խմիչքների լցնովի վաճառքը՝*** Հավելվածի հիշյալ կետով նախատեսվող համայքնի ղեկավարի կողմից տրված թույլտվության առկայության պահանջն անհրաժեշտ է հանել:

4. Հավելվածի 21-րդ և 23-րդ կետերով նախատեսված կարգավորումներն անհրաժեշտ է խմբագրել, քանի որ վերջիններս չեն բխում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի պահանջներից, ինչպես նաև չեն համապատասխանում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005 թվականի օգոստոսի 29-ի թիվ 152-Ն հրամանի /այսուհետ՝ Հրաման/ դրույթներին. Այսպես՝21-րդ կետով նախատեսված է անվանաքարտի լրացման վերաբերյալ դրույթներ, որոնք վերաբերում են միայն կազմակերպության աշխատողներին, մասնավորապես՝ անվանաքարտի վրա լրացվում է ***կազմակերպության*** ֆիրմային անվանումը, աշխատողի անունը, ազգանունը, աշխատողի զբաղեցրած պաշտոնը, ***իսկ անհատ ձեռնարկատիրոջ և վերջինիս մոտ աշխատողի անվանաքարտի*** լրացմանը վերաբերող կարգավորումները բացակայում են: Հետևապես՝ 21-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով Հրամանի 9-րդ կետով նախատեսված այն կարգավորումը, համաձայն որի՝ Անհատ ձեռնարկատիրոջ մոտ աշխատողի անվանաքարտի վրա լրացվում է՝ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը, պետական հաշվառման համար, աշխատողի անունը, ազգանունը, աշխատողի զբաղեցրած պաշտոնը: Անհատ ձեռնարկատեր հանդիսացող վաճառողի անվանաքարտի վրա, պաշտոնի փոխարեն, կատարվում է «Անհատ ձեռնարկատեր» նշումը:

5. Հավելվածի 23-րդ կետի համաձայն՝ անվանաքարտը ***վավերացվում է*** գործատուի ***ստորագրությամբ և կնիքով:*** Այս առնչությամբ հարկ է նկատի ունենալ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 6-րդ հոդվածի կարգավորումները,

որոնք նախատեսում են ոչ թե անվանաքարտի ***վավերացում***, այլ՝ ***հաստատում*** և պարտադիր է միայն ***ստորագրության*** առկայությունը, իսկ անվանաքարտը ***կնիքով հաստատելու պահանջ չկա:*** Նույն կարգավորումն է նախատեսված նաև Հրամանի 5-րդ կետում, համաձայն որի՝ անվանաքարտը ***հաստատվում է գործատուի ստորագրությամբ,*** հետևապես՝ կնիքի վերաբերյալ դրույթն անհրաժեշտ է հանել, իսկ «վավերացվում է» բառերը՝ փոխարինել «հաստատվում է» բառերով:

6. Հավելվածի 25-րդ կետում անհրաժեշտ է նշել հղում տրված ենթաօրենսդրական իրավական ակտի կրճատ անվանումը՝ *նկատի ունենալով* «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց իրավական ակտի հղումներ կատարելիս պետք է նշել իրավական ակտի կրճատ անվանումը:Վերջինիս կրճատ անվանումը հիշատակելիս առաջնորդվել«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, համաձայն որոնց՝ Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

7. Հավելվածի 32-րդ կետն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«32. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:»:

«Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու և Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի /այսուհետ՝ Նախագիծ/ 1-ին կետով սահմանվում է Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները, /այսուհետ՝ Կարգ/, մինչդեռ Նախագծի 2-րդ կետով նախատեսվում է առանձին սահմանել Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու պայմանները /այսուհետ՝ Պայմաններ/, ինչի առնչությամբ անհրաժեշտ է Նախագծի 1-ին կետի և Կարգի վերնագիրը խմբագրել՝ թողնելով միայն արտաքին գովազդ տեղադրելու ***կարգի*** վերաբերյալ դրույթները, ինչպես նաև նկատի ունենալ, որ Կարգում և Պայմաններում դրույթների կրկնությունները պետք է բացառել: Վերոնշյալ դիտողությունները բխում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 13-րդ հոդվածի 8-րդ մասերի պահանջներից:

2. Կարգի 1-ին կետում «Սույնով սահմանվում է» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Սույն կարգով կարգավորվում են» բառերով, իսկ «կարգը»բառը՝«կարգիհետ կապված հարաբերությունները» բառերով:

3. Կարգի 2-րդ կետում «տեղեկատվությունների» բառն անհրաժեշտ է փոխարինել «տեղեկությունների» բառով, «տարածումն» բառը՝ «տեղաբաշխումն»

բառով, «օգնությամբ» բառը՝ «ձևով» բառով՝ համապատասխանեցնելով «Գովազդի մասին» օրենքի 2-րդ և 11-րդ հոդվածների պահանջներին:

4. Կարգի 4-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ կարգի գործողությունը պետք է տարածվի իրավաբանական և ֆիզիկական անձանց, այլ ոչ թե տարածքների վրա:

5. Կարգի 5-րդ կետի դրույթներն անհրաժեշտ է պարզաբանել, քանի որ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով հողամասի վրա գովազդ տեղադրելու կարգի և պայմանների հետ կապված դրույթներ նախատեսված չեն, մինչդեռ կարգի 5-րդ կետը հղում է տալիս Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված կարգերին և պայմաններին: Պարզաբանման կարիք ունեն նաև այն կարգավորումները, որոնք վերաբերում են նախապատվության իրավունքով պայմանագրի երկարաձգման պայմանին:

6. Կարգի 10-րդ կետից անհրաժեշտ է հանել «սույն կարգին կցված» բառերը:

Նույն կետի համաձայն Համայնքի ղեկավարի որոշմանը կցվում են թույլտվությունը և գովազդի էսքիզը՝ համաձայն՝ Ձև 1-ի և Ձև 2-ի, սակայն հարկ ենք համարում նշել, որ գովազդի էսքիզի ձևը Կարգով սահմանված չէ:

7. Կարգի 11-րդ կետում խմբագրման կարիք ունի «հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ» արտահայտությունը: Նույն կետում «հաշվառման վայրը»բառերն անհրաժեշտ է վերանայել՝ ֆիզիկական անձի դեպքում կիրառելով «բնակության վայր», իսկ իրավաբանական անձի դեպքում՝ «գտնվելու վայր» տերմինները՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ և 59-րդ հոդվածների դրույթները: Նույն դիտողությունը վերաբերում է նաև Կարգի Ձև 1-ին:

8. Կարգի Ձև 1-ում բացակայում է «ֆիզիկական անձին» վերաբերող դրույթները, ինչի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ «Գովազդի մասին» օրենքի կարգավորումները, որոնց համաձայն՝ ֆիզիկական անձինք նույնպես համարվում են գովազդ արտադրողներ, գովազդակիրներ և գովազդատուներ:

9. Կարգի Ձև 1-ում «կազմակերպաիրավական» բառն անհրաժեշտ է փոխարինել «կազմակերպական-իրավական» բառերով՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ իրավաբանական անձն ունի իր անվանումը, որը ցուցում է պարունակում նրա ***կազմակերպական-իրավական ձևի*** մասին:

10. Կարգի 14-րդ կետում պարզ չէ, թե խոսքն ինչ «համապատասխան եզրակացության» մասին է:

11. Կարգի 23-րդ կետում առաջարկում ենք նշել գովազդ տեղադրելու թույլտվության ժամկետը լրանալու, պայմանագրով նախատեսված հիմքերով այն վաղաժամկետ դադարելու, լուծելու դեպքում գովադատուի կողմից գովազդի ապամոնտաժման հստակ ժամկետներ:

12. Կարգի 27-րդ կետի համաձայն՝ հողօգտագործման վճարի չափը սահմանվում է Բյուրեղավան համայնքի ավագանու կողմից: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ հիշյալ կարգավորումը դուրս է ներկայացված նախագծի կարգավորման առարկայի շրջանակից, ինչի առնչությամբ հարկ է նկատի ունենալ *«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, համաձայն որոնց*՝ Նորմատիվ իրավական ակտի կարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից:

13. Կարգի 29-րդ կետով նախատեսվում է գովազդ տեղադրելու գործընթացի նկատմամբ ***համայնքի ղեկավարի կողմից հսկողության*** իրականացում, իսկ գովազդի մասին օրենսդրության պահպանման ***նկատմամբ վերահսկողություն***՝ մարզպետի կողմից: Հիշյալ դրույթների կապակցությամբ հարկ է նկատի ունենալ «Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի կարգավորումը. Այն է՝ գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ ***վերահսկողություն*** իրականացնող ***Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը*** ձևավորվում է ***Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած***

կարգով, ինչպես նաև *«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի պահանջները, որոնցով նման լիազորություն սահմանված չեն համայնքի ղեկավարի և մարզպետի համար: Այս կապակցությամբ հարկ է նկատի ունենալ* ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

14. Պայմաններում կիրառված *«գովազդի միջոց» և «գովազդային տեղեկատու կրողներ» ձևակերպումները պարզաբանման կարիք ունեն՝ նկատի ունենալով, որ* «Գովազդի մասին» օրենքով նման հասկացություններ սահմանված չեն, իսկ *«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն*՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:

15. Պայմանների 4-րդ կետով նախատեսված են գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջները, ինչի կապակցությամբ հարկ է նկատի ունենալ, որ գովազդի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանված են «Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածում, որում անդրադարձ չկա գովազդ տեղադրելուն ներկայացվող պահանջներին: Հետևապես՝ պայմաններում հարկ է նախատեսել դրույթներ գովազդ տեղադրելու ***պայմանների*** և ոչ թե ***պահանջների*** մասին՝ նկատի ունենալով «Գովազդի մասին» օրենքի դրույթները, ինչպես նաև ներկայացված Նախագծի կարգավորումները, որոնք վերաբերում են գովազդի պայմանների սահմանմանը:

16. Պայմանների 5-րդ կետի 9-րդ ենթակետում անհրաժեշտ է պարզաբանել, թե խոսքն ինչ «մասնագիտական փորձաքննությունների» և ինչ «համաձայնեցված նախագծերի» մասին է:

17. Պայմանների 12-րդ կետում պարզ չէ, թե խոսքն ինչ «Չափորոշիչների» մասին է:

Նկատի ունենալով վերոգրյալ իրավական կարգավորումներն ու վերջիններից բխող նկատառումները՝ ներկայացված նախագծերն ամբողջությամբ վերանայման և լրամշակման կարիք ունեն:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

3/4/2022

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ